# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
## «28» փետրվարի 2020 թ-ին կնքված N «ՎԱ-ՍԱՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/2-1» Պետության կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան «18» հունվարի 2023թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Ջիէնսի-Ալֆա» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Հ. Ֆարամազյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար Գ. Ավետիսյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող), բոլորը միասին՝ կողմեր հիմք ընդունելով «ՎԱ-ՍԱՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/2-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## *1. Համաձայնագրի առարկան*

1.2 Հաշվի առնելով, որ 2023թ. պետական բյուջեով համապատասխան ծառայությունների մատուցման նպատակով հատկացվել է 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունները և վճարման ժամանակացույց՝ համաձայն Հավելված N 1-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2023թ.-ի հունվարի 01-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024065<br>ՀՎՀՀ 02505654 | «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ<br>ք. Աբովյան, Խաղաղության 1<br>«Կոնվերսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 19300-11980040100<br>ՀՎՀՀ 00096001 | Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին,<br>ք. Երևան, Կոմիտասի 49/2<br>ՀՎՀՀ 00454227 |
| (ստորագրություն)<br>Կ.Տ. | (ստորագրություն) | |

*Հավելված N 1*
*«28» փետրվարի 2020թ. կնքված*
*ՎԱ-ՍԱՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագրի*
*«18» 01. 2023թ. կնքված N 4 Համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64211100/10 | հանրային հեռախոսային ծառայություններ | 70 000 | 70 000 | 70 000 | 157 500 | 157 500 | 157 500 | 245 000 | 245 000 | 245 000 | 350 000 | 350 000 | 350 000 | 350 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024065
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Աբովյան, Խաղաղության 1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300-11980040100
ՀՎՀՀ 00096001

(ստորագրություն)

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ**

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին,
ք. Երևան, Կոմիտասի 49/2
ՀՎՀՀ 00454227

(ստորագրություն)